

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Բնութիկ Հարությունյանի անվան Արուվյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

1. Թերապևտիկ բաժանմունքի թերապևտ 1.0 դրույք
2. Հոգեբույժ -թմրաբան 1.0 դրույք
3. Իմունոլոգ 0.5 դրույք
4. Ընտանեկան բժիշկ 1.0 դրույք
5. Վնասվածքաբան 0.5 դրույք
6. Բժիշկ դեղագետ 1.0 դրույք
7. Դեղորայքի տրման և հաշվառման պատասխանատու բուժքույր 1.0 դրույք

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1. բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ,
2. Միջին մասնագիտական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ
3. Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
4. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում/լրացվում է տեղում/
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ուժ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
- 6) արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,
- 8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կժանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ <<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի / ք.Աբովյան Հատիսի փողոց 6 / բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 17.04.2017թ.:

Մրցույթը տեղի կունենա

20.04.2017 թվականին <<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում, ժամը 12:00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի աշխատանքային խմբին , կամ՝ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 0222 2 33 59 հեռախոսահամարով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: